Կ Ա Ր Ծ Ի Ք

Առնոլդ Սամվելի Վարդանյանի՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթը, որով ապահովվում է քրեական օրենքով արգելված արարք կատարած և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժումը, գործնականում պարունակում է մի շարք խնդրահարույց հարցեր: Այնինչ, նշված վարույթի վերաբերյալ ներկայիս իրավունքի զարգացմանը համապատասխանող համակողմանի հետազոտություններ, հատկապես հայրենական դատավարագիտության մեջ՝ ներպետական օրենսդրության կարգավորումներին համահունչ, բացակայում են:

Նման պայմաններում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի համակողմանի ուսումնասիրությունը դարձել է հրամայական՝ հաշվի առնելով նաև, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք համարվում են խոցելի խումբ և կարող են ենթարկվել տարբերակված մոտեցման՝ պայմանավորված հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքով: Ուստի, այս թեմայով գիտական հետազոտության կատարումը խիստ անհրաժեշտ էր մի կողմից օրենսդրական կարգավորումների թերությունները, մյուս կողմից՝ որոշ դեպքերում հակասական իրավակիրառ պրակտիկայի խնդիրները վեր հանելու և համապատասխան լուծումներ առաջարկելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ներկայումս շրջանառության մեջ է գտնվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, ակնհայտ է, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա նաև բարելավել այդ նախագծի

համապատասխան կարգավորումները՝ նպաստելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և իրավական երաշխիքների ամրապնդմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի ուսումնասիրության արդիականությունը հիմնավորված է իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է իրագործել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները, և հանգամանալի հետազոտության ենթարկել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին նվիրված քրեադատավարական խնդրահարույց մի շարք հարցեր և առաջարկել գիտականորեն նոր լուծումներ: Մասնավորապես, հեղինակին հաջողվել է ներկայացնել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման բնույթը, դերը և նպատակային նշանակությունը, բացահայտել փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու, ինչպես նաև անմեղսունակության վիճակում քրեական օրենքով արգելված արարք կատարած և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթ հարուցելու, անվտանգության միջոցներ կիրառելու հիմքերի և պայմանների շրջանակը, որոշակիացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի դատավարական կարգավիճակը, նրա իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիքների շրջանակը: Հատկապես, գիտական նորույթի տեսանկյունից հատկապես ուշագրավ են հեղինակի կողմից առաջ քաշվող պնդումները հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի իրավական կարգավիճակի առնչությամբ, վերջինիս իրավունքների և իրավական երաշխիքների ամրապնդման կառուցակարգերի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակն իր դիտարկումները ներկայացրելիս նաև օգտագործել է վերաբերելի՝ արտասահմանյան երկրների հարուստ տեսական աղբյուրներ և իրավակիրառ պրակտիկայի նյութեր: Այս համատեքստում, հատկապես ուշագրավ է հեղինակի կողմից օգտագործված արտասահմանյան գիտական աշխատությունների, օրենսդրական կարգավորումների վերլուծությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Եվրոպայի

խորհրդի խորհրդարանական վեհաժողովի և այլ կառույցների սահմանված չափանիշների ուսումնասիրությունը: Ընդ որում, հարկ է նկատել, որ դրանք ոչ թե մեխանիկորեն վկայակոչվել են աշխատանքում, այլ վերաբերելի հարցերի համատեքստում վերլուծվել են՝ դրանց հիման վրա ձևավորելով հեղինակային արժեքավոր դիրքորոշումներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, պետք է ընդգծել, որ հեղինակի կողմից նաև համակողմանի գնահատման է ենթարկվել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի պրակտիկան: Մասնավորապես, հեղինակն իր պնդումները ներկայացնելիս հիմնվել է նաև ներպետական դատարանների կողմից ձևավորված պրակտիկայի վրա և ներկայացրել գործնական առաջարկություններ՝ ուղղված իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդիրների լուծմանը:

Ներկայացված ատենախոսության կառուցվածքը բնորոշվում է աշխատանքի նպատակով և հետազոտվող հիմնախնդիրների շրջանակով: Այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող չափորոշիչներին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 11 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից:

Թեկնածուական ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են ու տրամաբանորեն փաստարկված: Աշխատանքում արված դիտարկումներն արժեքավոր նշանակություն ունեն ինչպես հայրենական դատավարագիտության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի զարգացման տեսանկյունից:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության կառուցվածքին և բովանդակությանը:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական աշխատանքում ներկայացված որոշ դիտարկումների կապակցությամբ կցանկանայինք ներկայացնել որոշ նկատառումներ: Այսպես.

Ատենախոսությունում հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածում օրենսդրական եղանակով թվարկված փորձագիտական եզրակացությունների ձեռքբերման պարտադիրության պահանջի նախատեսման

անհրաժեշտությունը ներկայումս ժամանակավրեպ է: Հեղինակի կողմից այս պնդման կապակցությամբ ներկայացված փաստարկներն և բերված օրինակներն այն մասին, թե ինչու այլ դեպքերում օրենքի ուժով փորձաքննություն նշանակելու պահանջ նախատեսված չէ (տե՛ս էջեր 41-42), թեև հիմնավորում են, որ առաջ քաշվող այդ պնդումն ունի տրամաբանություն, սակայն այնքան էլ համոզիչ չէ պայմանավորված այն հանգամանքով, որ օրենսդրորեն այդպիսի պահանջից հրաժարվելու դեպքում չի բացառվում, որ գործնականում լինեն իրավիճակներ, երբ առանց փորձաքննության նշանակման որոշվի անձի մեղսունակությունը: Մինչդեռ, նման մոտեցումն իրավաչափ լինել չի կարող:

Բացի այդ, հեղինակն ատենախոսությունում ներկայացրել է հիմնավորումներ՝ առաջարկելով հրաժարվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման պահը դատավարական որոշմամբ արձանագրելու քրեադատավարական կարգավորումներից (տե՛ս էջեր 67-69): Կարծում եմ, որ նշված պնդումն ընդունելի չէ և հատուկ իրավական երաշխիքների ու կարգավորումների կիրառման պահը սկզբնավորելու համար հատուկ վարույթի հարուցման դատավարական որոշման կայացումն անհրաժեշտ է:

Բացի այդ, կատարված ուսումնասիրությունն էականորեն կշահեր, եթե հեղինակը, ուսումնասիրության թեմայի շրջանակներում մասնավոր-հանրային տեսակի խառը քրեական հետապնդման մոդելի ներդրման առաջարկությունը հիմնավորելիս ձևակերպեր այն նաև իր պատկերացմամբ ընդունելի օրենսգրքում կատարման ենթակա օրենսդրական փոփոխությամբ:

Միևնույն ժամանակ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից նախընտրելի կլիներ, որ աշխատանքում հեղինակը նաև անդրադարձ կատարեր բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում դատախազական հսկողության առանձնահատկություններին և քննարկման առարկա դարձներ այն՝ որպես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք:

Հարկ է միաժամանակ փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը:

Վերը նշվածի պայմաններում, գտնում եմ, որ Առնոլդ Վարդանյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական, համալիր և ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ, որի մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրափակիչ մասում շարադրված հետևությունները:

Գտնում եմ, որ Առնոլդ Սամվելի Վարդանյանի՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը միանշանակ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական
դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ,

Իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ս.Ա Դիլբանդյան
22 հունիսի 2020 թ.

Ս.Ա.Դիլբանդյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,
իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Հ.Մ.Խաչիկյան